ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 3/9.2

քսանը ապրիլի 2012 թվականի

ԵՊՀ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ

- ԵՊՀ մաթեմատիկական անալիզի ամբիոնի ծանրաբեռնվածությունը կազմված է մաթեմատիկական անալիզի դասընթացից և ԵՊՀ այլ ֆակուլտետներում մաթեմատիկական առարկաներից,
- Մաթեմատիկական անալիզի ամբիոնում մաթեմատիկական անալիզ են դասավանդում ֆունկցիաների տեսության մասնագետները, որոնք սովորաբար դուրս են մնում ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր ղեկավարելու գործընթացից, քանի որ ամբիոնը չունի մասնագիտացում,
- Դասաժամերի կրճատման արդյունքում ֆունկցիաների տեսության ամբիոնն ունի 5 հաստիք և լրիվ հաստիքով աշխատող ընդամենը 2 դասախոս, իսկ այլ ֆակուլտետներում մաթեմատիկական առարկաների դասաժամերը մաթեմատիկական անալիզի ամբիոնում կենտրոնացնելու արդյունքում այդ ամբիոնն ունի շուրջ 15 հաստիք

ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ֆունկցիաների տեսության ամբիոնը վերանվանել <<ԵՊՀ մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոն>>՝ այնտեղ տեղափոխելով ֆակուլտետում դասավանդվող մաթեմատիկական անալիզի դասաժամերը
2. ԵՊՀ մաթեմատիկական անալիզի ամբիոնը վերանվանել <<ԵՊՀ ընդհանուր մաթեմատիկայի ամբիոն>>՝ այնտեղ թողնելով ԵՊՀ այլ ֆակուլտետներում մաթեմատիկական առարկաների դասաժամերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ